

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն .

Առ Տ. Գ. Յ. Ի Կ.

... Ձեր պատուական նամակին հետ ընդունեցանք աշխարհածանօթ շաղկիրատի մը երկու տղերք. յորում եթէ երկու հարիւր ծառ-թիւն եւ ստուծիւն կայ ըսեմք, չափազանցութիւն մը ըրած չեմք լինիր: Ուրախ եմք որ դուք ալ ուրիշ ամենայն ճշմարտասիրաց հետ այնպէս դատեցիր եւ հասկըցաք այն երկու տղերքը տետրակին բազմութիւն բարբառմունքը ընդդէմ բոլոր ազգիս ընդհանրապէս, մանաւանդ ընդդէմ եկեղեցականաց առ հասարակ, ընդդէմ Պօլսոյ Կրօնական ժողովոյն, եւ ընդդէմ քանի մը պատուաւոր անձանց. ուստի եւ արժանի չհամարելով այս տեղ զանոնք հերքելու ելնել, միայն ձեր նամակին մէջի երկու մտերմական հարցմանցը կպատասխանեմք համառօտիւ:

Նախ՝ ամենայն կերպով իրաւունք ունիք զարմանալու եւ ըսելու որ «եթէ յիրաւի վաւերական կամ գէթ անխաղախ են տետրակին «մէջ յիշուած նամակները (զոր չեմք կարծեր), ինչ աստիճանի հասած է ուրեմն Գ. Հիւրմուզեանին ռիսկալութիւնը, մանաւանդ թէ ... թիւնը, որ ատենով իրեն «հաւատարիմ՝ ատենադարէն, խորհրդակա-նէն ու հլու հպատակէն առանձնաբար առ ինքն գրուած նամակները՝ կառնու կմտնէ «այն անձին ռիսկիմ թշնամիներուն ձեռքը» եւ այլն: Մեք այսքանը միայն աւելցնեմք ձեր իրաւացի խորհրդածութեանը վրայ, որ Մխիթարեանց մեծաւորին այդ ... գործողութիւնն ընելուն մի միայն նպատակն էր անշուշտ՝ Գ. Սարգիս Վ. Թէոփորեանին եւ այն նամակները գրողին մէջ գժտութիւն ձգել:

Բայց իզուր. Գ. Սարգիս Վարդապետը արդէն շատ լաւ տեղեկացած էր եւ գիտէր թէ այն պիտի նամակները ինչ ազդեցութեամբ եւ որոյ քերայութեամբ գրուած էին այն միջոցներուն ...: Ոխակալութիւնը չէ թողուցած Մխիթարեանց մեծաւորին մտածել այդ գործողութեան ժամանակը թէ հապա ինչ մեծամեծ վնասներ կրնային ծագիլ իրեն եւ իւր միաբանութեանը՝ եթէ յանկարծ այն հին ատենադարէն ալ ելնէր տպագրութեամբ հրատարակէր նորա եւ քանի մը գլխաւոր միաբաններուն առ ինքն գրուած ... նամակները ... բայց ...

Երկրորդ, Փարիզ տպուած Վարդապետանը ոչ երբէք դատապարտութեան տակ ընկած է՝ ոչ Վեհափառ Կաթողիկոսին կողմանէ եւ ոչ Ռուսաց տէրութեան կողմանէ: Ինչպէս որ այս ճշմարիտ է, ճշմարիտ է եւ այն՝ որ տպագրութեանը ժամանակ, սրագրոյց՝ այսինքն հրատարակողաց, Գերապատիւ Գալիպեան եղբարց ներքի եւ անմեղ անուշադրութեամբ, եւ ոչ թէ գրաշարին կամ սրտիկն կամ Պարոն Արամին արագրութեամբ — որոյ այսպիսի խնդիրներու մէջ մտնելու կարողութիւն չունենալը վաղուց յայտնի է մեզ — քանի մը ամենաթեթեւ սխալներ սարգեր են մէջը, եւ այն ոչ թէ Հայոց Եկեղեցւոյ ընդդիմ բաներ: Ինչպէս որ կըսէ երկու տղան հեղինակը, եւ միամտաբար կկրկնէ Պ. ձ. Արամեան Փարիզ լրագրոյն 45 թուոյն մէջ: Ասոր վրայ ալ աւելի չեմք երկընցըներ մեր խօսքը, վասն զի գիտեմք որ արդէն կարգացած էք այն Վարդապետարանին վրայ գրածնիս անցած տարուան Մասեաց Աղանուոյն մէջ:

ՀԱՐԿԱՒՈՐ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.

Ամսագրոյս Դ թուոյն 44 երեսը, առաջին սեան 45 տողին մէջ սխալմամբ գուրա ընկած է դուշմ բառը, ինչպէս որ նախընթաց եւ հետեւորդ խօսքերէն եւս յայտնի է:

ՀԱՆՆԵԼՈՒԿ.

Անուն մը ունի ամենաբարակ,
Թէպէտ եւ ինքն է որսորդ քաջորսակ,
Այնպէս ձրկուն
է իւր անուն,

Որ ասեղի բարակ ծակէն
Կընայ անցնիլ՝ հեշտ մալուխէն.
Բայց ինքն անձրկուն սիրտ ունէր ու գլուխ
Եւ ազատութեան եղաւ նա գրկուս:

Տարւոյս Օրացուցին Մայիս ամսոյն առաջին Հանելուկն է ԿԱԹ, որ ետեւի կողմէն կարդալով կլինի ԹԱԿ (թօմաֆ), երկրորդը ԱՐՁԱԳԱՆԳ.

Հրամայեցաք տպագրել. Իթեղոսիա, ԻԶԱ Ապրիլի 1864. Գարրիէլ Վ. Այվազեան.

ԻՏՎԱՐԱՆԻ ԽԱՎԻԿԵԱՆ ՈՒՍՈՒՄԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ: